

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի հունվարի 2-ի թիվ 05-ՂԵ/2
հրամանով



Ժաննա Անդրեասյան


2024 թ.

Կազմված է 2022 թվականի փետրվարի 18-ին և
բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ 2

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի աարածքային
բաժնի կողմից 13.02.2003 թ.-ին
Գրանցման համարը՝ 286.210.04879
Վկայական՝ 03 Ա.059195
ՀՎՀՀ՝ 02515823
13.02.2003թ. գրանցված
կանոնադրության թիվ 4
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից

18.01.2024 թ.
աշխատակից



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Կ. Ս. ՍՏԱՆԻՍԼԱՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ
ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(փոփոխություն)

ք.Երևան-2024

1. «Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնադրության 24-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«24. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված իջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես կազմակերպությանն իրենց կանոնադրական որոշումային իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ կազմակերպությանը փոխանցելու համար:

Կազմակերպությունն իրավունք ունի երրորդ անձանց տրամադրել տարածքներ և մատուցել ծառայություններ լիազորված պետական մարմնի ղեկավարի 2021 Վականի փետրվարի 24-ի «Թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված տարածքներում երրորդ անձանց կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումներն իրականացնելու համար ծառայությունների մատուցման գործընթացի կանխանացման» N 213-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած արժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հիմնադրի կողմից սպառված գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի

մ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դարադատության և ախարարության իրավաբանական անձանց պետական գիտրում գրանցված (գրանցման համար՝ 286.210.04879) «Կ. Ս. Ստանիսլավսկու վան պետական ռուսական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային գնահերպության կանոնադրության անբաժանելի մասը: